



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

150

✓ 12.61

Дмитрий Гаврилович
Савваитович Савваитович

1999



Савваитович Р

Савваитович Савваитович

Савваитович

Савваитович. С. С.

Савваитович
Савваитович Савваитович
Савваитович

1862

43830 - u. h.

9.



28233-62

1838

ՄԱՅՐԵՆԻ ԶԱՐ ՕՐԻՆԱԿԻՆ ՎՆԱՍՆԵՐԸ



Մէկ մայր մը որ լաւ գիտար թէ իւր
 տուած օրինակը ուրեքսն ունի
 տղայոցը մտքին վրայ, ու անոնց ահ
 տենով աղէկ կամ գէշ ինքեքր Անկ Ես
 տիճանի պատճառ պիտի վրի, անոնց
 առջեւ մէկ խօսք մը չէր ըսեր, մէկ
 բան մը չէր ըներ՝ առանց ինքնիրեն մտա-
 ծելու թէ ի՞նչ այս բանս կզրուցեմ կամ կը-
 նեմ, բայց պիտի գիտնամ որ ըսածս կամ
 ըրածս զաւակացս մտքէն յաւիտեան պիտի
 չելնէ :



Ահ, այս մտածութիւնը թէ մեռնելէս
 ետքը ինչ պիտի ըսեն ինձի համար, աղնիւ
 սիրտ ունեցող մարդուն վրայ շատ մեծ էջ

1261-60
 ՅԲ. 1264

ունի . այս աշխարհիս նեղութիւնները որ
 չափ կթեթեւան' երբոր մտածեմք թէ ա
 տենով զմեզ մեր զաւակները կարօտով ու
 ցաւելով պիտի յիշեն . բայց մէկալ կողմա
 նէ ինչ անտանելի բան է մտածելը թէ ա
 տենով մեր հող դարձած մարմնոյն վրայ
 անէծքներ կարգացուին . ինչպէս հազար
 ափսոս պիտի ըսեմք մեր բրածներուն ու ը
 սածներուն , ինչպէս պիտի սոսկամք այն
 յաւիտենական նախատինքներէն որ մեզ
 ձեռքովը պատրաստած կլինիմք :

Ատենով Փեթրովի կեցող Գաղղիոյ դեռ
 պանին ատենադպիրը պարոն Նորիս իրեն
 հարստաւ էր Ամելիա Սեն - Ֆար անունոյ
 օրիտորը . Ասոր մայրը զարգասէր ու ան
 հող կին մըն է իր . ուստի Ամելիան տը
 զայու թէնէն խելը երես ելած ու խեղեփցած
 էր : Մէկ շէնքով դիրք մը , մէկ խրատական
 կամ բարեպաշտական գրուածք մը կարգա
 ցած չունէր . քիչ մը բան սովրած էր նէ
 ասդիէն անդիէն կարգացած կտորերը ու
 բաներէն էր , այն ալ միայն այս մտքով որ
 աղիտութեանը համար ուրիշներն երես
 վար չառնեն : Միայրը վառվռուն էր , բայց
 մտածութիւնը խառնափնդոր . անդադա
 մէկ խօսքէն մէկալը կցատքէր . ըսած խօս
 քերուն ամենեւին ուշ չէր գներ , միայ

այս կնայէր որ դրուցածը նոր ու կարգէ
դուրս բան մը լինի, որչափ որ սուր ու ան-
ակնկալ խօսքեր լսած էր՝ համարձակ դուրս
կիժափէր, առանց մտածելու թէ դիմացին-
ներուն սիրտը կծակէ, երեսնին կկարմըր-
ցընէ. թէպէտեւ այս ծանր ծանր պակասու-
թիւններուն հետ ընտանի եւ անոյշ բնաւ-
որութիւն մըն ալ ունէր, որով ամենուն սիր-
տը իրեն կքաշէր: Պարզ ըսեմք. այն տեսակ
նորահաս կանանց մէկն էր՝ որոց մէկ խօս-
քը մէկալին չյարմարիր, եւ օդուն մէջ ե-
ղած փոխախուժիւններէն աւելի ստէպ կը-
փոխուին նոցա մտածու թիւնները, փափաք-
ները, գղացմունքները:

Սակեւիային վրայ զմայլույններէն մէկն ալ
պարօն նորիս ըսուածն էր, Սթրասպուրկ-
ցի ազնուական ճնողոց մէկ հատիկ դաւակ,
ու Գաղղիոյ տէրութեան գետպանական գոր-
ծողութեանցը մէջ շատ վարպետ մարդ:
Սա խիստ շատ անդամ Սակեւիան տեսած լի-
նելով ժողովներու եւ ընկերութեանց մէջ,
փեսայացաւ անոր: Վրան շատ չանցաւ, հաս-
կըցաւ նորիս թէ ճշմարիտ է եղեր այն
խօսքն որ կըսեն թէ «Սմուսնութեան լուծը
ամէն բանէ աւելի ծանրացընողը թե՛ թեւա-
միտ ամուսինն է»: Միայն այս կայ որ Սակե-
ւիան իւր ընկերը խաբած չէր. թե՛ թեւասօլի-

կութիւնը այնպէս ճանչցուած էր ամէն տեղ
որ նորլիս աւելորդ կհամարէր անոր համար
խօսք մը ընելը, եւ Ամելիան ինքն ալ ըսած
էր թէ իմ բնութիւնս այսպէս է. ուստի
քանի որ կնոջը անձունի գործողութիւննե-
րը վերջի ծայրը չէին հասած՝ էրիկը համ-
բերութիւնը ձեռք աււած՝ կնստէր կծիծա-
ղէր վրան: Եթէ գանգատ մըն ալ ուզէր ը-
նել՝ որո՞ւ պիտի ընէր. գիտէր որ ամէն մարդ
զինքը ծաղր պիտի ընէ: Բաղդը բանեցա-
որ այն միջոցին իրեն սիրտը քիչ մը հանգ-
չեցաւ Վասն զի աղջիկ զաւակ մը ունեցաւ
Ամելիան, եւ անունը Նոյեմի դրին: Մայրը
ուզեց որ ինքը կաթ տայ զաւակին, եւ այն-
չափ սէր կապեց աղջկանը վրայ որ բոլոր
օրը անոր հետ կանցընէր. ուր մնաց այն
ծիծառնիկն որ անդադար թռչըտելու վրայ
էր. աղաւնի մը դարձեր էր հեզ ու հաւա-
տարիմ, որ դիշեր ցորեկ թեւերովը պահ-
պանութիւն կընէր իւր սիրելի ձագուկին
Այնուհետեւ պարօն նորլիսին ուրախութեա-
նը չափ չկար. հայրութեանը վրայ գոհ,
եւ փեսայութեանը վրայ ուրախ, երանի կու-
տար ինքն իրեն որ ընտրութեանը մէջ սը-
խալմունք մը չէ ըրած: Բայց Նոյեմին կա-
թէն կտրուած չկտրուած, այն հաւատարիմ
աղաւնին նորէն սկսաւ թռչըտիլ:

Նոյեմին երեք տարին նոր լմընցուցեր էր՝
երբ պարոն Նորլիսին հրաման եղաւ որ Փե-
թրապուրկ երթայ: Մինչեւ այն ժամանակ
տեսնելով որ կնոջը բնաւորութիւնը փոխե-
լուն հնարը չկայ, կամայ ակամայ համբե-
րեր էր խոհեմութեամբ, որպէս զի ուրիշ
ներուն ալ բերանը չընկնի. բայց երբ պէտք
եղաւ որ ինքը հեռանայ քովէն, մտածեց որ
ճար մը ընէ, աղջիկն ալ մօրը չար օրի-
նակէն հեռացընէ: Սթրասպուրկին մէջ մամ
մը ունէր՝ կոմսուհի Մեյլիլ անունով՝ շատ
ստրկի տէր. Նորլիս ըսաւ ընկերոջը թէ
մամս ինծի լաւ ժառանգութիւն մը պիտի
թողու, բայց կուզէ որ ես Փեթրապուրկ գնա-
ցած ատենս իւր թոռան զաւակը քովը մնայ:
Այս բանս Ամելիային թէպէտեւ շատ ծանր
եկաւ՝ բայց չէ չըսաւ. քիչ մը արտասունք
թափեց, ու ճամբայ դրաւ աղջիկը հօրը
հետ. միտքը գրեր էր թէ հարկաւ տասնը-
հինգ օրէն աւելի պիտի չանցնի, նորէն պի-
տի տեսնէ իւր սիրուն զաւակը, որ արդէն
սկսեր էր իւր մօրը կերպարանքը եւ վառ-
վրուուն բնաւորութիւնը վրան երեւցընել:
Ամիս անցաւ, պարոն Նորլիս Փեթրապուրկ
հասնելէն ետեւ թողթ մը գրեց կնոջը. նո-
րամէն աղջիկը հեռացընելուն պատճառը
ծածուկ պահելու համար կըսէր՝ թէ «իմ

պատուական մամս այնպէս սաստիկ սէր մը
կապեց Նոյեմիկին վրան որ խօսք առաւ ինծ-
մէ քիչ մը ատեն զինքը իւր քովը ձգելու՝
որ ծերութեանը մխիթարանք եւ ուրախու-
թիւն լինի. ես ալ չկրցայ, կըսէր, կամսու-
հոյն սիրտը կատրել այն մինակութեանը
մէջ, մանաւանդ որ քովիններն ալ բոլոր
հեռաւոր եւ օտար անձինք են ու անոր սար-
կին վրայ աչք անկած են » :

Ընկերոջը երթալէն ետեւ Ամեյիան ինք-
զինքը բոլորովին անէ առն պարտելու տուաւ
ու զուարճութեանց ծովուն մէջ սկսաւ լողալ.
բնութեանը թեթեւութենէն՝ զաւակին իր-
մէ հեռանալն ալ շուտով մոռացաւ : Իսկզբան
քանի մը խօսքեր ըսաւ որ իւր աղուն կա-
րօացած մայր մը իհարկէ կըրուցէ . յետոյ
սկսաւ ըսել թէ գիտեմ որ Նոյեմիկս Ս թրաս-
պուրկ ալ մնայ նէ՝ դէշ չլինիր . առողջու-
թեանը համար ալ լաւ է հոն կենայ՝ քան
թէ Փարիզ գայ . վերջապէս վեր կըարնէր՝
վար կըարնէր, կատնէր որ աղջկանը իւր
քով չգտնուիլն աւելի լաւ է, որովհետեւ
աղջկանը աչքէն հեռու լինելովը՝ իւր սո-
վորական դրօտանքներէն ետ կենալու պատ-
ճառ չէր ունենար . այս ալ կմտածէր թէ
զաւակս Մերիլի կամսուհոյն քովը քանի որ
ուշանայ, այնչափ անոր սիրտը կվասարկի :

որով կոմսուհին ալ իրեն մնալու հարստու-
թիւնը ուրիշներուն չձգեր: Վասն զի մեր
ատենի կնիկ մարդկանցմէ ոմանց սրտին
մէջ ստրկի սէրը այնչափ է որ կրնայ մին-
չեւ բնութեան ամենաքաղցր զգացմունքներն
ալ խղդել. իրաւցընէ այնչափ տեսակ տեսակ
ծախքեր ալ կրնեն որ իրաւունք ունին վախ-
նալու որ մի գուցէ ստակնին չկարենան
բաւեցընել:

Այսպէսով տարիներ անցաւ, Ամեւիան իւր
աղջկանը երեսը չտեսաւ. բայց կոմսուհին
շատ անգամ իրեն թուղթ կգրէր, աղջկանն
ինչպէս լինելը կխմացընէր, նոյեմին ալ քիչ
ատենէն սկսաւ ինքը գիր գրել. վասն զի
այնպիսի պատուական խաթունի մը ձեռք
էր որ քիչ ատենէն ամէն բանի մէջ շուտ
շուտ առաջ գնաց, ու բարեպաշտ եւ բարե-
կիրթ դաստիարակութիւն մը ունեցաւ: Այն
միջոցին պարոն նորլիս Փարիզ դարձաւ քանի
մը ամսուան համար, բայց նոյեմին հետը
չբերաւ. Ամեւիային սիրտը շատ նեղացաւ
այս բանիս, մինչեւ կասկածի ալ գնաց թէ
չեն ուզեր որ իւր աղջկան կրթութիւնը
ինքը տայ: Վերջապէս չդիմացաւ, ձայնը
բարձրացուց. «Վաղը կերթամ աղջիկս կոմ-
սուհւոյն ձեռքէն կառնում» ըսաւ: Սակայն
ընկերը խօսք հասկըցուց անոր, սիրտը ա-

ուաւ՝ ըսելով թէ այն պատուական խաթուհի
այնպիսի սէր մը ձգեր է իւր թռուիկին
վրայ որ չկրնար անկէց զատուիլ. աս ալ կայ
որ, ըսաւ, մեր աղջկանը առջեւ փառաւոր
բաղդ մը կայ, նայինք որ ձեռքէ չհանենք.
վասն զի մամս զինքը Տարմանթիէր կոմսին
հետ կարգելու միտք ունի՝ որ անուանի զօ-
րավար է, եւ ատենով իւր հօրը տեղը բռ-
նելով սեպուհ պիտի լինի: Սմելիայի սրտին
մէջ հպարտութիւնն ու փառասիրութիւնը
քնութեան ձայնը խղճեցին. մտածեց թէ
ինչ երջանկութիւն պիտի լինի իրեն՝ երբ
օր մը իւր աղջիկը սեպուհի մը հարս եղած
տեսնէ, որով կարենայ թագաւորին պա-
լատն ալ երեւնալ. ուստի յանձն առաւ որ
նոյեմին իւր մեծ մամուն քով մնայ մինչեւ
որ կարգելու ատենը հասնի. «Միայն թէ այս
սղէկ գիտցիր, ըսաւ էրկանը, որ երբ միւս-
անգամ դուն Ռուսաստան դառնաս, ես ալ
պիտի երթամ քիչ մը ժամանակ աղջկանս
քով անցընեմ»:

Նորիս նայեցաւ որ մէկ մօր մը այսպիսի
իրաւացի բաղձանքին չէ ըսել չլինիր. ուս-
տի շատ անգամ Սթրասպուրկ տարաւ զին-
քը: Սմելիան ամէն անգամ կտեսնէր որ իւր
նոյեմիկը քանի կերթայ աւելի համեստ կը-
լինի, միանգամայն գիտուն՝ առանց թե-

թեւամտութեան, եւ ջերմեռանդ՝ առանց
կրօնամոլութեան, ըսել է թէ բարեպաշ-
տութիւնը սրտին մէջ խորունկ արմատներ
ձգեր էր կոմսուհւոյն խրատներովը: Նոյն կոմ-
սուհին սէր չէր մնար որ Ամելիային ալ չը-
ցուցրնէր. պատիւներ, ընծաներ, հարկիք-
ներ. թեթեւօլիկ Ամելիան այն հարկիք-
ներուն մէջ ինքզինքը մոռցածի պէս՝ այն-
պիսի համարձակութիւններ կրնէր որ էր-
կանն ու մամուն աչքին չէին կրնար չզարնել.
բայց ճշմարիտ ջերմեռանդները ներողա-
միտ ալ կլինին. ուստի Մէլլիլ տիկինը միշտ
առաջինը կլինէր իւր հարսին պակասու-
թիւնները պարտրկելու. հարսն ալ քիչ ա-
տենէն ձանձրացաւ այնպիսի տան մը մէջ
կենալէն, ուր որ չէր կրնար իւր խենթ ու
խելառ սովորութիւնները ետեւէն ըսել:
«Մնաս բարով» ըսաւ նոյեմիին, ու դար-
ձաւ Փարիզ, միտքը դնելով թէ որ մը ի սրտի
դինքն ալ իւր քովը բերէ՝ վրայէն այն գոր-
տեցիի պակասութիւնները բոլորը շտկէ վեր-
ցրնէ:

Եւստի
«Մնաս բարով»
«Մնաս բարով»
«Մնաս բարով»

Այն սպասած օրը իւր կարծածէն ալ շուտ
եկաւ հասաւ, վասն զի Մէլլիլ կոմսուհին
կարճ հիւանդութեամբ մը վախճանեցաւ.
մինչեւ վերջի շունչը նոյեմիին վրայ հող
կրնէր, ու քանի որ կմտածէր թէ այնպիսի

մօր մը ձեռք պիտի մնայ ազջիկը՝ կստկար
կատրապիէր: Վերջապէս նոյեմիին գրկին
մէջ հոգին աւանդեց, ապապրելով իւր ար-
գիւնաւոր ու հաւատարիմ սենեկապետին,
ու անկէ խօսք առնելով որ նոյեմիին քովէն
չզատուի, ու երբ հայրը Փեթրոպուրկէն դառ-
նայ՝ անոր ձեռքը յանձնէ: Սենեկապետը
խօսքին վրայ կեցաւ. բոլոր սրտանց ամէն
տեսակ ծառայութիւն կրնէր նոյեմիին, ոչ
միայն իբրեւ սլարտք մը կատարելով, հապա
նաւեւ բնական յօժարութեամբ. վասն զի այն
հրեշտակաախպ ազջիկը իւր աչքին առջեւը
մեծցեր էր, եւ քանի որ առջի տիկնոջը
բարեգործութիւններն ու անոյշ բարեպաշ-
տութիւնը անոր վրայ ալ կանսնէր՝ սիրտը
կբացուէր. ուստի միտքը գրած էր թէ բը-
նաւ մէկը շիրնար այն սրբազան աւանդը իւր
ձեռքէն յարիշտակել առնուլ:

Բայց շատ չանցաւ, Ամելիան Սթրաս-
պուրկ գնաց. էրկանը գործակալին հետ ալ
այնպէս խօսք դրաւ որ ժառանգութեան
գործողութիւնները կարգի դրուելուն պէս՝
նոյեմին ալ տուն դառնայ: Խեղճ ժերմեկը
(ծերունի սենեկապետին անունն այս էր)
շատ գէմ կեցաւ այս բանիս, կամսուհին
մեռնելու ատեն ինծի այսպէս չապապրեց
ըսելով. բայց ո՞վ մտիկ կրնէր իրեն: Ձեռքը

ամենեւին գրուածք մը չունենալէն զատ ,
մօր մը ձեռքէն զաւակն առնուլը կարելի
բան չէր . այսչափ միայն կրցաւ ընել որ
Նոյեմիին հետ մէկտեղ ինքն ալ Փարիզ եր-
թայ ու անոր յատուկ սենեկապետը լինի :

Ս. յապէսով Նոյեմիին խելքէն մտքէն չան-
ցած ժամանակ՝ Սթրասպուրկէն մօրը տու-
նը գնաց , եւ յանկարծակի բոլոր իրեն սովո-
րու թիւնները՝ վարժ ու թիւնները փոխուե-
ցան : Առաջ որ առաւօտները ճիշդ ժամը
եօթնին կելնէր անկողինէն , անկէց ետքը
տասնէն առաջ մօրը բնակարանէն անցնիլ
չէր կրնար . նախաճաշիկը տասնըմէկին հա-
ղիւ թէ կընէր , ուստի ոչ երբէք կէսօրէն
առաջ կրնար եկեղեցին երթալ : Թէ որ հա-
ւատարիմ ժէրմէնը չլինէր , տօնի օրերն
եւս այն բարեպաշտական պարտքէն ետ պի-
տի մնար : Տան մէջի ուրիշ ամէն ծառանե-
րը կկանտային Նոյեմիին վրայ որ ժէրմէնին
հետ եկեղեցի կերթայ , այն բաւական չէր ,
մօրը կողմանէ ալ արգելքներ ունեցաւ .
պէտք եղաւ որ մեծ տօներուն միայն եկեղե-
ցի երթալով գոհ լինի . կջանար որ այն օ-
րերը երեկոյեան ժամերգութեան ալ եր-
թայ , բայց ճար չէր լինէր , վասն զի մայ-
րը ճիշդ նոյն ատենին կընդունէր այն հիւ-
րերն որ իւր տունը կերակուրի հրաւիրուած

կլինէին . նոյեմին ալ պէտք էր զանոնք հարկելու օգնէր մօրը , անով մարդու հետ վարուիլ սովրէր , ու Փարիզու բարակ բարակ սովորութիւններուն վարժէր : Այսպէսով պէտք եղաւ որ կամայ ակամայ՝ մօրը հետեւինա ալ առաւօար ուշ ելնելով , կէսօրէն մէկ ժամ ետքը հազիւ կերթար եկեղեցին՝ վերջին պատարագ մը տեսնելու :

Նոյեմին այն փոփոխութիւններուն վարժելու համար իսկզբան նեղութիւն ալ կը քաշէր նէ՝ կամաց կամաց սովրեցաւ . յետոյ պէտք եղաւ որ հազուստի ու զարդարանքի կողմանէ ալ կերպը փոխէ ու մօրը նմանի : Սթրասպուրկէն հետը բերած հազուստները ալ իրեն չէին յարմարիր , անոնց ձեւը հին ու կոպիտ կերեւնար , մէջքերը լայն , թեւերը երկայն , պէտք էր որ Փարիզու նորելուկ բարակութիւններուն համեմատ բաներ լինէին հազածները . ուստի առին զինքը Փարիզու ամենէն անուանի գերձակին տարին , նա ալ նոյեմին գլխէն մինչեւ ստքը մէկ ձեռք մը նոր հազուստ կտրեց , եւ նեղկուկ կրծակապ մը շինեց : Նոյեմին տեսաւ որ այն հազուստները շատ նեղութիւն կուտան իրեն , բայց մէկ կողմանէ ալ անոնց աղուորութեանն ու ձեւին չէր կրնար չհաւնիլ . սկսաւ ըսել թէ իրաւ որ մարդուս տեսքը


գուրս ցատքեցընող հագուստի կողմանէ՝
Փարիզու պէս տեղ չկայ աշխարհիս երեսը:
Քիչ ատենէն բամպըկէ գուրպաները ձգեց,
սկսաւ մետաքսէ հագնիլ, այժու կաշիէ շի-
նուած ոտքի ամանները թողուց, ճերմակ
կերպասէ մուճակներ հագաւ. վերջապէս
խելքը միտքը տուաւ իւր մօրը նման լինե-
լու, անոր պէս շարժմունքներով քալելու,
անոր պէս կոտրրտուելու, անոր պէս աչուը-
ները մէկգիւն մէկալ դին դարձընելու
Մէկ բան մը միայն կար մօրը վրան որ նոյե-
մին սիրտ չէր ըներ նմանն ընելու. այս-
ինքն վիզը ուսերը բաց պահել: Շատ անգամ
եւ մինչեւ ուրիշներու առջեւն ալ՝ այն ան-
խոհեմ մայրը ծաղր կընէր իւր աղջիկը՝
«Սա խղճահար մարապետին նայեցէք» ըսե-
լով. ինչ գեղեցիկ շարեր ու թեթեւ շալեր
ալ կուտար անոր որ հագուի սրգուի. բայց
նոյեմին հաստ թաշկինակով միշտ աղէկ մը
կպատատուէր: Այս բանիս համար ինչեք
քաշեց մօրը ձեռքէն, ինչ սիրտ ծակող
խօսքեր լսեց . . . այնչափ որ «խղճահար
մարապետ» ըսուելէն ալ ձանձրացաւ. եւ
օր մը որ մէկ մեծ ժողով մը կար իրենց
տանը մէջ, հաստ թաշկինակին տեղը ամե-
նաբարակ շար մը վիզը ձգած՝ ուրախու-
թեամբ ու ամբընալով մը մօրը քով մօտե-

ցաւ, «Մայրիկ, հիմա ինչպէս եմ» ըսաւ :
Անխելք մայրն ալ՝ իբր թէ մեծ յապօթու-
թիւն մը ըրած լինէր՝ սկսաւ աղջիկը շոյ-
ել, գովել, «Ի՛նչ եւ իցէ՝ վերջապէս ճամ-
բայ եկար, սիրելի զաւակս, դրսեցիի կոպ-
տութիւնները ձգեցիր, փարիզեցի դար-
ձար» ըսելով, առաւ աղջիկը մեծ դահլիճը
տարաւ ուրախութեամբ. նա ալ չէր գիտեր
թէ ինչպէս շփանայ որ կարենայ ինքզին-
քը մօրը հաւնեցընել : Մէյմալ տեսնես որ
դահլիճին դռնէն դուրս ծերուկ ժէրմէն,
կեցեր է. նա համեստ նոյեմիին վրայ այժ
նոր տեսակ բայց զարդարանքը տեսածին պէս
+ «Ա՛խ, ըսաւ. իմ խեղճ խաթունս հիմա աղջ
լինէր ու տեսնէր» Այս խօսքը նեախ
պէս ծակեց նոյեմիին սիրտը. բայց քիչ ա-
տենէն այնպէս ընկղմեցաւ զբօսանքի եւ զը-
ւարճութեանց մէջ որ այն լսածը մոռցաւ
դնաց : Աչուրները անդադար մօրը վրայ
էին որ չլինի թէ անոր ըրած կոտորտաւածք-
ներէն բան մը պակաս մնայ որ ինքն ալ
չընէ : Առաւօտը լուսանալու մօտեցաւ, ժո-
ղովը արձրկուեցաւ. նոյեմին ալ յոգնած
դադրած՝ քաշուեցաւ սենեակն որ քնանայ
հանգչի. եւ այն առաջին անգամն էր որ
իբիկուան ազօթքն ալ չըրաւ :

1838

Երկրորդ օրը մեծ տօն էր. Նոյեմին կէս-
 օրն ելաւ ու եկեղեցի երթալը մտքէն ան-
 գամ չանցուց, եւ մօրը հետ Պռլոյնի անստա-
 ըսուած հասարակաց դրօսարանը դնաց պը-
 տըտելու՝ հագուած կապուած, այնպէս օր-
 ամէն տեսնող կկանգնէր կնայէր վրանին, եւ
 «Մայր ու աղջիկ իրարմէ վար չեն մնար»
 կըսէր: Հոն տեսաւ Նոյեմի որ շատ մը աղ-
 ջիկներ անագոնակ ըսուած երկայն ու սեւ
 հագուստը հագած ու ձի հեծած կըլուարճա-
 ան. ուստի մօրը յորդորանքովը ձի հեծ-
 ելու դաս սկսաւ առնուլ: Այս բաներս
 տեսնելով ծերուկ ժէրմէնը՝ գլուխը շար-
 ժելով կըսէր քթին տակէն. «Ախ, հիմա
 խեղճ խաթունս ողջ լինէր ու տեսնէր»:

Կերպ մը՝ շարժմունք մը չթողուց Նոյեմին
 իւր մօրը վրայ որ ինքն ալ չընէ. ուստի մօ-
 րը պէս բարձր ձայնով կժիծաղէր, մօրը
 պէս՝ հետը խօսողին ականջէն վար կիւրծփը-
 սար. մօրը պէս՝ քաղաքական խնդիրներու
 վրայ խօսք եղած ատեն խոշոր խոշոր կշար-
 դէր. մօրը պէս՝ մէկուն մէկալին վրայ
 արհամարհանօք ու ծաղրածու թեամբ կխօ-
 սէր: Բոլոր յանցանքը մօրն էր, խեղճ աղ-
 ջիկը ինչ ընէր, խարուեցաւ անկէց. բայց
 եւ այն խարուիլը բոլոր կենացը մէջ թը-
 շուառ լինելուն պատճառ



22288-62

Այն ատենները Տարսանիքի գնդապետը
իւր հասակէն վեր մեծամեծ քաջութիւններ
ընելով՝ Գաղղիոյ պարծանքը աւելցընելու
հետ էր։ Երկու տարի կար որ հրեշտակա-
տիպ նոյեմիէն հեռու մնացեր էր. ուստի
սաստիկ կարօտցեր էր զինքը տեսնելու,
մանաւանդ որ նա իրեն հետ նշանուածի պէս
էր։ Հարկաւոր նամակ մը ունէր՝ որ ձեռ-
քովը պիտի տանէր Փարիզ պատերազմի
ոստիկանին յանձնելու. այն առիթը ձեռ-
քէ չհանելով՝ Սմելիային տունը հանդի-
պեցաւ. ըսին իրեն թէ տունը մարդ չկայ,
վասն զի խաթունը աղջկանը հետ Պուլօյնի
անտառը գնացեր է։ Ինքը քսանըջորս ժա-
մէն աւելի չէր կրնար Փարիզ ուշանալ. ուս-
տի շուտ մը ձին հեծաւ ու շիտակ այն ան-
տառը գնաց, հաստատ միտքը դրած լինե-
լով որ նոյեմին տեսնելուն պէս պիտի ճանչ-
նայ։ Հոն մօտենալէն ետեւ՝ ձին սկսաւ
կամաց կամաց քալցընել, ու առջեւէն անց-
նող կառքերուն մէջ աչքը տնկած կնայէր.
Համեստ՝ վախկոտ ու ամբողջով օրիորդ մը
տեսնելուն պէս՝ ահա ինքն է կրսէր, բայց
շուտ մը կիմանար որ խաբուեր է, քիչ
մըն ալ առաջ կերթար։ Այսպէսով մինչեւ
անտառը գնաց հասաւ։ Այն օրը մայիս ամ-
սուն առջի օրերէն մէկն էր, անոր համար

անտառին մէջ խիստ շատ մարդ պտըտելու
գնացեր էր : Տարմանթիէր յողնեցաւ աս-
դիս անդին նայելէն , ձին պահապանի մը
յանձնեց , ու սկսաւ քովընտի եղած ծառա-
տունկին ճամբաներուն մէջ քալել բազմու-
թեանը հետ մէկտեղ : Մէյմ' ալ նայիս' հե-
ռուանց մէկ փոշի մըն էր ելաւ , ամէն մարդ
սկսաւ դէպի այն կողմը նայիլ , վասն զի
կարգէ դուրս արշաւանք կամ ձիրնթաց
մըն էր : Տարմանթիէր նայեցաւ տեսաւ որ
տասնըվեց տասնըեօթը տարեկան օրիորդին
մէկը փառաւոր ամազոնակ մը հաղած ու
անգղիացի ձիու մը վրայ հեծած , չորս
դիէն ալ վեց ձիաւոր երիտասարդ , սանձար-
ձակ կերպով վազելով կուգայ : Կնայի Տար-
մանթիէր , « Կարծեմ թէ սա . . . չկրնար լի-
նել' կըսէ մտքէն , այն ամը չկատ ու վախ-
կատ նոյեմին ինչպէս այդ օրիորդը լինի որ
երեսին ջուրը կորսընցուցած ին մէկն է : Բայց
կերպարանքը նոյն հրեշտակային կերպա-
րանքն է , կըսէ , հասակը նոյն , նայուածքը
նոյն . . . » Ատոր նման մտածու թիւններու
մէջ տանջուած ատենը' յանկարծ քովին-
ներէն մէկը ելաւ ըսաւ թէ « Սա պարոն
Նորլիսի անուանի աղջիկն է որ ամէն տեղ
կգանուի » : Անդիէն մէկն ալ « Խեհդ է ու-
րեմն ատոր մայրն որ այդպէս թողեր է որ

աղջիկը ուր ուզէ պտրտի» ըսաւ : Չգիտա-
ցաւ Տարմանթիէր, դարձաւ ինքն ալ քո-
վիններուն, «Ի՛նչ կըսէք» ըսաւ, պարոն նոր-
լիսին աղջիկն է նա, — Հնուա, ըսին. Փե-
թըրպուրկի գետազանատան ատենադպրին
մէկ հասիկ աղջիկն է . . . » Այս խօսքերէն
Տարմանթիէր կայծակէ դարնուած ի նման
շուարեցաւ մնաց. ձին հեծաւ, թռչունի
պէս վազցընելով՝ նորլիս խաթունին տունը
գնաց : Մէյմ՝ ալ ներս մտնէ նայի որ նոյեմին
դեռ ամազոնակը չհանած՝ կեցեր մօրը իւր
գլխէն անցածները կպատմէ. նա ալ՝ ոչ
նոյն հագուստը հագած՝ գէպի ուրիշ մէկ
կողմը արշաւեր էր, բարձր ձայնով կծիծա-
ղի : Տարմանթիէրը տեսնելուն պէս՝ Ամե-
լիան ուրախութեամբ մը «Աղէկ հասար՝ ը-
սաւ ծիծաղելով. եկուր սա թեթեւօլիկ
աղջկանս նայէ ի՛նչպէս քիթը կախեր է . . .
ես ասոր Պուլոյնի անտառը տարի որ ձի
հեծնայ. սա առջեւէն սանձարձակ գնացած
ատենը, ես որ ետեւէն գեղեցիկ անգղիացի
ձիու մը վրայ հեծած կերթայի՝ յանկար-
ծակի ձիուս սանձը դարձուցի, շիտակ Փա-
րիզ դարձայ : Այս մեր վախկոտ ամազոնը
այնպէս կարծեր է թէ ես ալ ետեւէն գա-
լու վրայ եմ, շատ մը երթալէն ետեւ գառ-
նայ նայի որ մինակ մնացեր է. վայ աս ի՛նչ

ձիւն էր որ գլխուս եկաւ, հիմա ինչ պիտի
ընեմ ըսելով՝ դառնայ տրտուամ տխուր ձին
վազցընելով վրաս հասնի, ասկէց աւելի տը-
ղայութիւն կրնայ լինել»։ Անխոհեմ խա-
թունին ըրած պատմութենէն քիչ մը սիրտ
առաւ Տարմանթիէր, վասն զի տեսաւ որ
այն անշնորհք գործողութեան գլխաւոր
պատճառ նոյեմին չէ եղեր, մօրը ետեւէն
հասնելու համար է եղեր որ այնպէս առանց
աջ ու ձախ նայելու՝ բազմութեան մէջէն
վազեր անցեր է։ Խօսքը փոխեց, իրեն յանձ-
նուած պաշտօնին վրայ խօսեցաւ. «Այս օրե-
րը օգնդապետութեան աստիճանին հասայ,
ըսաւ, ու այս իրիկուն նորէն ճամբայ պիտի
ելնեմ որ բանակը դառնամ։ — Այնպէս է նէ
այսօրուան կերակուրը մեզի հետ կուտես,
ըսաւ խաթունը, բոլոր մեր բարեկամներն
ալ պիտի հրաւիրեմ»։ Ուստի փառաւոր
հարկիք մը պատրաստել տուաւ, եւ որչափ
անուանի ու անխոհեմ խաթուններ որ կային՝
կերակուրի հրաւիրեց. նմանապէս ինքնա-
հաւան գիտուններ, գոռոզ գեսպաններ,
բանի չհաւնող արհեստագէտներ, անկուշտ
հացկատակներ, . . . Տարմանթիէր այն խառ-
նափնդորութեան մէջ անդադար նոյեմին
շարժմունքները կգիտէր, կնայէր որ առջի
անկեղծ՝ ամբողջ տ նոյեմին չէ որ Սթրաս-

պուրկ տեսեր էր ատենով. սակայն իւր սէ-
րը անոր վրայէն չպակսելով՝ կամած էր թէ
արդեօք ինչ ընէ որ մօրը տուած չար օրի-
նակին վաանգներէն աղատ պահէ զինքը .
ուստի ճամբայ ելնելու ատենը նոյեմիին
ըսաւ կամացուկ մը . « Ա՛խ, ո՛ւր էր թէ Մէլ-
վիլ կոմսուհին ողջ լինէր հիմա » :

Այս խօսքը՝ որ անդադար ծերուկ ժէր-
մէնին բերանն էր՝ նոյեմիին մինչեւ սրահն
խորունկը թափանցեց . վասն զի գիտէր թէ
այն իրեն տղայութեան ատենէն սիրելի ե-
ղած քաջ բարեկամը՝ Պուլօյնի անտառին
մէջ տեսածը չէր կրնար մոռնալ : Այն օ-
րէն սկսաւ նոյեմի ամէն կողմանէ իւր վար-
քը շտկելու աշխատիլ, եւ ամէն բանէ ա-
ռաջ տկարութիւնը պատճառանք բռնելով՝
մօրը հետ ասդիս անդին պարապ պարտե-
լէն ետ կեցաւ . ետքն ալ շատ դժուարու-
թեամբ կրցաւ կամաց կամաց հարկիքներէ
քաշուիլ, ու միայն իւր մօրը ամէն երեք-
շաբթի օրեր ըրած փառաւոր ժողովքնե-
րուն մէջ երեւնալ : Հոն ժողովուող երեւելի
մարդկանց մէկն ալ Թիանի մնունով դերա-
կոման էր, թագաւորին սիրելի օստիկան-
ներէն մէկուն եղբօրորդին, Գաղղիոյ ազ-
նուական ցեղերէն մէկուն ալ մէկ հասիկ
ժառանգ . կարիճ մարդ, վարմունքը անոյշ,

շարժուածքը կրակոտ, բայց միանգամայն
գոռոզ, առնուող, ինքնահաւան, թեթեւա-
միտ, ամենուն հետ կռիւ ընող եւ ամենեւին
ուրիշի խօսքին տակը մնալ չուզող:

Այս թիանժ գնդապետը նոյեմիին շատ
պատիւ կընէր: Օր մըն ալ մեծ հարկիքը
բաւ իւր հօրեղբօրը պալատին մէջ, ու Ա-
մելիան ալ նոյեմիին հետ մէկտեղ հրաւի-
րեց, ամէն մարդ առաջուց իմացեր էր թէ
այն հարկիքին մէջ վիճակ ալ պիտի հա-
նուի, եւ ամէն խաթուն մէկ մէկ ընծայ պի-
տի ընդունի: Նոյեմին ձեռքէն եկածին չափ
աշխատեցաւ որ այն հարկիքին չերթայ,
բայց մայրը հասկըցուց անոր թէ այն նա-
խատինքը ոստիկանին կերթայ, որովհետեւ
նորա անունովն է հարկիքը: Խեղճ նոյեմին
վախցաւ որ իւր հօրը վնաս մը չլինի իւր
պատճառաւ, ելաւ գնաց մօրը հետ հար-
կիքին, եւ վիճակին ատենը նոյեմիին գե-
ղեցիկ վզնոց մը ելաւ, եւ որովհետեւ ամէն
խաթուն իրեն ընկած բանը մէկէն կհագնէր
կամ կկապէր վրան, պէտք եղաւ որ նոյեմին
ալ վզնոցը առնու թիանժին ձեռքէն ու իւր
վիզը կապէ: Ասոր վրայ որ չափ որ նոյեմին
ամբըցաւ, մայրն այն չափ ուրախացաւ, ու-
րիշ խաթուններն ալ նախանձելով մը իրա-
րու ականջէն վար կփափրսային թէ նշանը

արուած ու առնուած ի պէս բան մը եղաւ :
Բայց նոյեմիս տուն դառնալուն պէս՝ հանեց
վզնոցը, սնտուկի մը տակ պահեց, եւ միտ-
քը դրաւ որ յաւիտեան վիզը ջանցընէ :
Կամաց կամաց հասկըցաւ թէ մայրը թէ-
պէտ զինքը շատ կսիրէ, բայց շատ ալ վնաս
կընէ իրեն. աչքը չորս բացեր էր որ չլինի
թէ ուրիշներուն բերանն ընկնի, եւ անդա-
դար կաշխատէր որ մօրը աւրածներն ինքը
շտկէ :

Ամելիան օր չէր լիներ որ իւր աղջկանը
երեսին չզարնէր այն քաշուածութիւնն որ
նորէն սկսեր էր ձեռք առնուլ. Թիանժ դե-
րակոմսը մօրմէն ալ աւելի կառնուէր նոյե-
միին վրայ տեսած պաղութենէն, բայց ա-
մենեւին չէր կրնար դարձընել նոյեմիին
միտքը :

Այն օրերը Գաղղիացիք փառաւոր յազ-
թութիւն մը ըրեր էին իրենց թշնամեացը
դէմ. դերակոմսին հօրեղբայրն ալ ստիպուե-
ցաւ մեծ հարկիք մը ընելու, եւ ուրիշ ա-
տենի պէս՝ այն անգամ ալ իրեն յանձնեց
հարկիքին հոգը : նոյեմիին այն անգամուն
աւելի ալ դժուարութեամբ յանձն առաւ
մօրը հետ հոն երթալ. իսկ իրեն վիճակով
էլած վզնոցն ամենեւին չէր ուզեր դնել :

բայց մայրը այնչափ խրատ՝ այնչափ աղա-
չանք՝ այնչափ յանդիմանութիւն ըրաւ խեղճ
աղջկանը որ պէտք եղաւ վզնոցը դնէ վիզը:
Հարկիքին մէջ գտնուողներուն ամենուն աչ-
քըն ալ այն ականակուռ վզնոցին վրայ մնաց.
որը կգովէր, որն ալ նախանձէն վար կզար-
նէր. մինչեւ ինքն իսկ գերակոմսը սկսաւ
պարծենալ թէ այն վզնոցը ես իմ ձեռքովս
տուեր եմ օրիորդին՝ իբրեւ իրեն նշան:
Անդիէն մէկը կրակոտ աչուրներով ու կրտ-
րուկ ձայնով մը ըսաւ թէ « Այդ օրիորդը
ուրիշէ նշան առած չունի »: Թիանժ նայե-
ցաւ մարդուն երեսը, « Իրան կըսես » ըսաւ
հեղնելով: Պատասխան տուաւ մէկալը թէ
« Միայն օրինաւոր նշանն է որ դա կրնայ
ընդունիլ. եւ թէ որ մէկը յանդգնի այս
խօսքիս վրայ տարակուսելու, պատրաստ եմ
հիմակուրնէ հասկըցընելու իրեն »: Ըսել
կուզէր թէ մենամարտութեան կեղնեմ ա-
նոր հետ, ինչպէս որ այնպիսի տաքգլուխ
երխտասարդաց պարսաւելի մէկ սովորու-
թիւնն էր այն ատենները: — Կընդունիմ
առաջարկութիւնդ, ըսաւ Թիանժ, ո՛ւր կու-
զես, եւ ո՛ր տան:

— Վաղը առաւօտ ժամը տասնին՝ Պուլոյնի
անտառը:

— Մէկ վայրկեան մըն ալ սպասել չեմ տար քեզի :

— Այդ բանին վրայ չեմ տարակուսիր :

— Զէնքդ :

— Սուր, որ ամենայն գաղղիացի սպայից զէնքն է » : Օտարականը այս ըսաւ ու քաշուեցաւ դնաց :

Երկրորդ օրը երկու երիտասարդներն իրենց վկաներովը դիմացէ դիմաց ելան, վրկաները ստիպեցին զիրենք որ զարնուելէն առաջ անուննին ու վիճակնին յայտնեն. « Ես թիանժ դերակոմսն եմ, ըսաւ մէկը, պատերազմի ոստիկանին եղբօրորդին :

— Ես ալ Տարմանթիէր գնդապետն եմ, Գաղղիոյ սեպուհի մը որդի :

— Ուրեմն կրնանք մեր պատուովը իրարու գէմ ելնել » :

Դերակոմսը իսկզբան կտրճուեցամբ յարձրկեցաւ, բայց շուտով հարուած մը առաւ իւր ոսոխէն կուրծքին, ու արիւնլուայ եղած վար ընկաւ. աչուրները մթընցան ու երեսին գոյնը պատ դարձաւ : Տարմանթիէր քիչ մը ատեն անոր օղնելու աշխատելէն ետեւ, կարծեց թէ մեռեր է, աղաչեց քովիններուն որ պէտք եղած բաները հոգան, ու ինքը շուտ մը

տուն գնաց. գիտէր որ մեծ շիտթութիւն պի-
տի ընկնի Փարիզու մէջ՝ թէ որ իրաւցընէ
գերակոմսը մեռնի. միտքը դրաւ որ ձգէ
փախչի, Գաղղիայէն հեռանայ: Միայն թէ
ճամբայ ելնելէն առաջ ուզեց որ Նոյեմիին
հետ տեսնուի ու վերջին բարեւը տայ անոր:
Ելաւ գնաց պարօն Նորլիսին տունը. տեսաւ որ
բաղդէն Ամելիան դուրս ելեր է, իրիկունն
ալ թէատրոն պիտի երթայ. իսկ Նոյեմին
մինակ է, Մերունի ժէրմէնը Տարմանթիէրն
առաւ՝ քովը տարաւ. Նոյեմին կարծեց թէ
նոր եկեր է բանակէն, բայց Տարմանթիէր
ըսաւ թէ «Երէկ իրիկունն ուշ ատեն եկայ,
պատերազմի ոստիկանին թղթեր բերի, ու
հարկիքը սկսած էր՝ երբոր ես ալ ներս
մտայ. հասած չհասած՝ քու վրադ խօսքեր
լսեցի» ըսաւ, ու ամէն բան տեղն իտեղը
պատմեց: Խեղճ Նոյեմին շատ աշխատեցաւ
որ սիրտը առնու, ճար չեղաւ. Տարման-
թիէրին խղճմտանքը սաստիկ զարնելով որ
այնպիսի կտրիճ մարդու մը արիւնը թա-
փեց, դարձաւ Նոյեմիին խրատ տուաւ թէ
ինչ գէշ բան է անխոհեմութիւնը. «Նայէ,
«ըսաւ. դուն ալ գիտես թէ որչափ սէր ու
«նէի ես քու վրադ պզտիկուց իվեր. . . եւ
«հիմա պէտք է որ ալ իրարու երես չտես-
«նեմք. . . ես գիտեմ որ դուն ամենեւին

« յանցանք մը չունիս. բայց ինչ օգուտ,
« ուրիշները մտքերնին դրած են թէ դաւա-
« ճան՝ իսառնակիչ՝ անհաստատ ու անխոհեմ
« աղջիկ մըն ես, եւ պատուաւոր մարդկանց
« արիւնը կմտնես... » Ի՞նչ, դուն այդ վարքովդ
« զքեզ ալ թշուառացուցիր, զիս ալ... Մը-
« նաս բարով, նոյեմի, շատ դժուարս կու-
« գայ որ քեզմէ պիտի հեռանամ, բայց ինչ
« ընեմ, խոհեմ ու թիւնն այսպէս կցուցընէ:
« Նայէ՛, ուրիշներն որ համարմունքնին կոր-
« սընցուցեր են վրայէդ, գոնէ դուն քու
« պատիւդ պահէ »: Այս ըսաւ, ու ծերունի
ծառային յանձնելով օրիորդը՝ ելաւ գնաց:
Նոյեմի սոսկալի տրամութեան եւ յուսա-
հատութեան մէջ ընկղմած, քանի որ կմտա-
ծէր թէ ուրիշներուն առջեւ անունը մէկ
ստրկի եղեր է՝ խելքը գլխէն կերթար. այն
ժամանակ հասկըցաւ խեղճը թէ չար օրի-
նակը ինչ գէշ բան է եղեր, բայց շատ ուշ
էր. ժէրմենին վիզը փարեցաւ լալով ու ը-
սաւ. « Ա՛խ, բարեօիրտ ու հաւատարիմ՝ ծա-
ռայ, դուն միայն կրնաս աղատել զիս այս
անտանելի վիճակէս... Տարմանթիւրէն այ-
սուհեաւ յոյս չկայ ինձի... մօրս ըրածները
երեսին տալ՝ իմ բանս չէ. կարենայի ալ
զինքը յանդիմանել նէ՛ ինչ շահ պիտի վնէր,
անունս աւրուելէն ետքը... դուն ալ գիտես

որ յանցանքը իմս չէ . . . Այլ ես հոս չեմ կրը-
նար մնալ, պէտք է որ դուն զիս առնուս
հօրս քովը տանիս. շուտ ըրէ, ճամբու պատ-
րաստութիւն տես. ժամ մը առաջ հեռա-
ցուր զիս մօրս քովէն » : Պատասխան տուաւ
ճերուկը թէ « Շատ աղէկ, ես զքեզ առնում
տանիմ, ողջ առողջ հօրդ ձեռքը տամ . . .
բայց երկու հոգի մէկտեղ ինչպէս պիտի
ընեմք այն երկայն ճամբան, եւ սրչափ ծախք
կլինի մինչեւ Փեթրպուրկ . . . Կեցիր, միտքս
բան մը եկաւ. ես փոքրիկ եկամուտ մը ու-
նիմ տարին երեքհարիւր Ֆրանքի, որ ողոր-
մած հոգի մեծ մամդ կապեր է ինձի. անով
ճամբուն ծախքը կհոգամք . . . շուտ ընեմք
ուրեմն, ելնեմք այս տնէս . . . Երթամ կառք
մը բերեմ, անով առաջ իմ ազգականներէս
մէկուն տունը կերթամք, որ Սթրասպուրկի
ճամբուն վրայ դեղ տեղ մը կընակի՝ ասկէց
տասնըհինգ մղոն հեռու. հոն քանի մը օ-
րուան մէջ անցագիր մը կճարեմ, մէջը դնել
տալով թէ դուն իմ աղջիկս ես. կելնեմք
կերթամք . . . Սիրտ առ ուրեմն, մի վախ-
նար, գիտցիր որ մեծ մամդ երկինքը բա-
րեխօս է քեզի համար . . . » Այս ըսաւ ու ե-
լաւ գնաց. նոյեմին մնաց սաստիկ շփոթու-
թեան ու տարակուսանքի մէջ. մօրմէն ըստ-
նուիլը մեծ ցաւ էր սրտին, վասն զի կմտա-

Ր

Տէր որ թերեւս մէյմըն ալ յաւիտեան չը-
տեսնէ զինքը, բայց մէկ կողմանէ ալ քանի որ
կմտածէր այն անխոհեմութիւններն որ ընել
տուեր էր նա իրեն, քանի որ կ'իշէր թէ ին-
քը ինչ էր կոմսուհւոյն քով, սիրտ կառնէր
միտքը դրածը կատարելու... Եկաւ ժէրմէն,
իմացուց թէ կառքը պատրաստ է, նոյեմիին
ձեռքը ոտքը դող ելաւ, մօրը կենդանա-
գիրը համբուրեց լալով ու ըսաւ. « Թերեւս
մէյմըն ալ չտեսնեմ զքեզ: » Մէկէն ծուռի
չսքեցաւ, մօրը համար այնպիսի ջերմե-
ռանդութեամբ մը աղօթք ըրաւ որ շատոնց
չէր ըրած. մէյմըն ալ նայեցաւ կենդանա-
գրին վրայ, ու ելաւ գնաց հաւատարիմ ծա-
ռային ետեւէն:)

Այն իրիկունը Ամելիան աշատեն տուն
դարձաւ. միտքը դրած լինելով որ իհարկէ
աղջիկը իւր սենեակը պառկած կ'ընանայ,
ինքն ալ իւր բնակարանը քաշուեցաւ ու
հանգիստ քուն մը եղաւ: Երկրորդ առաւօտ,
կէսօրը մօտեցաւ, դեռ նոյեմիին չեկաւ չե-
րեւցաւ: Ծառաներուն հարցուց, ըսին թէ
նոյեմիին իւր սենեակը չէ, ժէրմէնն ալ նոյն-
պէս չերեւնար: Մտքէն անցաւ որ գուցէ
երկուքն ալ մէկտեղ ելեր են կանուխկեկ
ժամ դնացեր են: Ելաւ դնաց իւր աշխա-
տութեան սենեակը, ու գրասեղանին վրայ

Թուղթ մը տեսաւ՝ այս հասցէով. «Առ մայրն
իմ»։ Բայց տեսաւ որ գրերը արտասուքի կա-
թիլներով աւրուածի պէս են. սիրտը դող
ելաւ, մէկէն իմէկ բացաւ Թուղթը, տեսաւ
որ մէջը այս խօսքերս գրուած են. «Ես քու
«ձեռքդ անմեղ անարատ յանձնուած էի,
«հիմա ձեռքէդ գրեթէ աւրուած կելնեմ...
«ահա նորէն հօրս կտանիմ այն աղէկու-
«թիւնն որ քովդ մնալով պիտի չկարենայի
«անկորուստ պահել... Ո՛վ մայր իմ, լաց
«նոյեմիիդ վրայ... եւ օրհնութիւնդ տուր
իրեն»։ Ամելիան խելքը կորսընցուցածի
պէս պաղեցաւ մնաց. կարծէր թէ երազ է
տեսածը. ինքզինքը կուզէր խաբել, խելքը
վրան ժողվել, ու չէր կրնար. ընկաւ բազ-
մոցին վրայ, լալով ողբալով կարգաց նորէն
այն Թուղթը. յետքոյ վեր ցաաքեց, խենթի
պէս վազեց աղջկանը սենեակը, ու նորա
գրասեղանին վրայ ալ այն դժբաղդ վզնոցին
պահարանը գտաւ, հետը այս տոմսակով.
«Այս վզնոցը եղաւ իմ խեղճութեանս ու
«քեզմէ բաժնուելուս պատճառ. կխնդրեմ
«որ ոչ երբէք վիզդ կախես»։

— Ո՛չ երբէք, ո՛չ երբէք կկախեմ, սիրելի
«նոյեմիկս, կանչեց Ամելիան՝ մէկգինետելով
«վզնոցը. այն ինչ յանցանք էր որ ըրի ես...
«եւ հիմա ինչ սոսկալի խրատ է որ կլսեմ»։

Նոյեմբին այս կերպով յանկարծակի փախ-
չելուն պատճառը ուղեց ծածուկ պահել
իւր ծանօթներէն, եւ կրսէր ամենուն թէ
պարօն նորլիսը խնդրեր էր որ աղջիկս իւր
քովը դրկեմ. բայց քիչ ժամանակէն ամէն
բան դուրս ելաւ: Թիանժ դերակոմսին մա-
հաւան դուռը հասնիլն ալ երբոր լսեց, սըր-
տին ցաւը կրկին եղաւ, վասն զի այն պատ-
ճառաւ Տարմանթիէր ստիպուեցաւ Գաղ-
ղիայէն փախչելու, եւ քիչ մնաց որ զինուո-
րական պաշտօնն ալ վար պիտի ձգուէր:
Բաղդը բանեցաւ որ դերակոմսը կամաց կա-
մաց տաղջանաւու վրայ եղաւ, եւ շատ աշխա-
տեցաւ որ իւր պատուական ոստիւր պաշտօ-
նէն չընկնի. «Մեր կռուոյն մէկ հատիկ պատ-
ճառ այն անխոհեմ մայրն էր, որ ասկէց
ետքը երեսն ալ չեմ ուղեր տեսնել» կրսէր:

Կարճ ժամանակէն Սմելիան թուղթ մը
առաւ պարօն նորլիսէն, յորում կգրէր թէ
«Նոյեմբին այսուհետեւ Գաղղիա ոտք պիտի
չկոխէ՝ իւր մօրը չար օրինակին պատճա-
ռաւ. ես ալ պիտի երթամ Խրիմ քաշուիմ
եւ հոն երկրագործութեան ետեւէ լինիմ,
որպէս զի խեղճ Նոյեմբիկս ալ անով զթօ-
սանք մը ունենայ. վասն զի աշխարհք մըտ-
նելու միտք չունի»: Նամակը վերջացընելու

ժամանակ՝ այս ալ կըսէր թէ « Այսուհետեւ
« մեր ամուսնութեան կապը քակուած է .
« բայց որպէս զի գայթակղութիւն չլինի
« եւ դատաստանական որոշմունքներով խըն-
« դիրը փուճ տեղը չերկարի , ահա քեզի
« տարուէ տարի վեց հազար ֆրանք կկապեմ
« որ քու ինձի բերած օժտիդ շահն է » :

Պէտք եղաւ որ անկէց ետքը Ամելիան իւր
պալատը թողու , պղտիկ տան մը մէջ քա-
շուի նստի . սրտին ցաւէն ալ քիչ ատենի
մէջ պառւեցաւ , երեսը նայող՝ քովը հան-
տիպող չմնաց , սկսաւ տրտում տխուր կեանք
մը անցընել : Իւր մէկ հաստիկ մխիթարանքը
նայեմիէն առած թղթերն էին , անոնք ալ
իւր յանցանքները միտքը կձգէին . . .) քանի
քանի անգամ ափսոսաց որ ինչպէս իւր
աղջկանը պատիւը կորսընցընելուն եւ նորա
աքսորանքին պատճառ եղաւ : Վերջապէս
երբոր գլխէն անցած գնացած բաները միտ-
քը կբերէր , ու այն տարիքը հասեր էր որ
մարդս դարձար տեղէ մը իջնալու կերպով
մահուան կմօտենայ (ու ձեռքէն բռնող սի-
րելի անձի մը օգնութեանը կարօտ է , որ
մայրն որ տեսնէր՝ կդառնար կըսէր անոր .
« Ո՛վ մայրեր , աղէկ նայեցէք , չլինի թէ
« ձեր աղջկանց կըթութիւնը երեսի վրայ

« Թողուք ինձի նայեցէք ու տեսէք թէ
« ինչ վիճակի հասայ ես որ կնիկ մարդկանց
« մէջ ամենէն զարդարեալ, ամուսիննե-
« րուն մէջ ամենէն բարեբաղդն ու մայ-
« րերուն մէջ ամենէն օրելին էի. լացէք
« ողբացէք իմ վրաս, լացէք ողբացէք նոյե-
« միկիս վրայ... , եւ մտածեցէք թէ մայրենի
« չար օրինակին վնասները որչափ սոսկալի են » :



